ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0009, ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00374 10) 511-771

№ԴԴ-1 Ե-2054

«15» մարտի 2022թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնակատարին հասցեագրված Ձեր 04.03.2022թ. թիվ 349-70 գրության՝ հայտնում եմ, որ Դատական դեպարտամենտի 11.01.2022թ. թիվ ԴԴ-1 Ե-129 և 25.01.2022թ. թիվ ԴԴ-1 Ե-497 գրություններով «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ նախագահ Կարեն Զադոյանի թվով հինգ գրություններին տրվել են սպառիչ պատասխաններ:

Միաժամանակ հայտնում եմ, որ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ քննարկման առարկա դիմումներում բարձրացված հարցերի՝ ՀՀ կառավարության 03.10.2019թ. թիվ 1332-Ն և 10.10.2019թ. թիվ 1441-Լ որոշումների վերաբերյալ պարզաբանումների տրամադրումը, ինչպես նաև նշված որոշումների շրջանակներում այլ անձանց հաշվետվությունների ներկայացումը դուրս է Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունների շրջանակից:

Վերոգրյալից բացի, հարկ է նկատել, որ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ նախագահի կողմից ներկայացված գրություններով հայցվող տեղեկատվությունը պահանջվել է առցանց ֆոկուս խմբային քննարկում իրականացնելու նպատակով:

Հարգանքով՝

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Իրավական ակտերի մշակման
և փորձաքննության վարչություն
Հեռ. 511-815